ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Ա.Ա. Քալաշյան

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Միջազգային և Եվրոպական իրավունքի

Հեղինակ՝ Ն.Գ.Աբգարյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Միջազգային իրավունքի ներածություն

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Միջազգային իրավունքի ներածություն առարկան նախատեսված է իրավագիտության ուղղության բակալավրիատում ուսանողներին միջազգային հանրային իրավունքի վերաբերյալ բազային գիտելիքներ տրամադրելու համար:

Դասընթացի ընթացքում ուսանողները կծանոթանան միջազգային հանրային իրավունքին՝ որպես իրավունքի առանձին համակարգի և կյուրացնեն նշված համակարգի դերակատարներին ու վերջիններիս կողմից միջազգային իրավունքի նորմերի ստեղծման ու կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողներին բազային գիտելիքներ տրամադրել միջազգային հանրային իրավունքի վերաբերյալ և դյուրին դարձնել բակալավրիատի երրորդ կուրսում ուսանողների կողմից միջազգային հանրային իրավունք առարկայի նյութը յուրացնելու գործընթացը:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խդիրները.

- Ուսանողները կարողանում են տարանջատել միջազգային հանրային իրավունքը ներպետական իրավունքի ճյուղերից:
- Ուսանողները հնարավորություն են ունենում հետագայում միջազգային ասպարեզում մրցույթների մասնակցելու համար միջազգային հանրային իրավունքի բազային գիտելիքներ ձեռք բերել:

Դասընթացի օբյեկտը և առարկան.

Դասընթացի օբյեկտը դա միջազգային հանրային իրավունքն է՝ որպես իրավունքի առանձին համակարգ, իսկ առարկան միջազգային հանրային իրավունքի դերակատարներն են ու վերջիններիս կողմից միջազգային իրավունքի նորմերի ստեղծման ու կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացումը երթադրում է, որ ուսանողները տիրապետում են «Պետության և իրավունքի տեսություն» առարկայի հիմնական հասկացություններին:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները ՝

1. Բազային գիտելիքներ միջազգային հանրային իրավունքի՝ որպես իրավունքի առանձին համակարգի մասին:
2. Պատկերացում միջազգային հանրային իրավունքի դերակատարների (Սուբյեկտներ) մասին
3. Միջազգային հանրային իրավունքի աղբյուրների և սկզբունքների իմացություն:

Հմտությունները ՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները*** ՝

1. Տարբերել միջազգային հանրային իրավունքը ներպետական իրավունքից
2. Առանձնացնել միջազգային հանրային իրավունքի սուբյեկտներին ու հասկանալ նրանց դերը միջազգային հարաբերություններում:
3. Միջազգային իրավունքի շրջանակներում կարողանալ անդրադառնալ պետության ատրիբուտներին ու դրանք կիրառել պրակտիկ իրավիճակներում այս կամ այն տարածքում ձևավորված կազմավորումների նկատմամբ:

Կարողունակությունը (կոմպետենցիան) ՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը*** ՝
- Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո աշխատել միջազգային իրավունքի բազային աղբյուրների հետ.
- Ունակ է տարբերակել միջազգային հանրային իրավունքը ներպետական իրավունքի ճյուղերից
- Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ միջազգային իրավունք ներածություն առարկայի նյութերի վերաբերյալ առաջադրված հարցերին պատասխանելու համար:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասընթացներն անցկացվում են ինչպես դասական (դասախոսություն և սեմինար) ձևաչափով, այնպես էլ զուգորդելով դասական մոտեցումը նորարարական մոտեցումներին: Դասընթացներն անցկացվում են ինտերակտիվ ձևով՝ ուսանողների ակտիվ մասնակցությամբ քննարկումներին՝ նրանց մոտ վերլուծական մտածողության հմտությունների զարգացման նպատակով: Սեմինարը սովորաբար բաղկացած է տեսական հարցերի քննարկումից, որոնք ուսանողից պահանջում են ուսումնասիրել ծրագրով առաջարկվող գրականությունը: Սեմինարներն ուղղված են թեմայի ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքների խորացմանն ու ընդլայնմանը, ինչպես նաև ուսանողների մոտ առաջացած հարցադրումներին դասախոսի կողմից հստակ պատասխաններ տրամադրելուն:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1.Դասախոսություններ	**16**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**

1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	16
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	40
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	40
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	20
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	20
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Միջազգային հանրային իրավունքը որպես իրավունքի համակարգ:	6	4	2
Թեմա 2. Միջազգային իրավունքի զարգացման փուլերը:	6	4	2
Թեմա 3. Իրավասուբյեկտությունը միջազգային իրավունքում: Միջազգային իրավունքի սուբյեկտները:	4	2	2
Թեմա 4. Միջազգային իրավունքի աղբյուրները:	4	2	2
Թեմա 5. Միջազգային իրավունքի	4	2	2

հիմնարար սկզբունքները:			
Թեմա 6. Միջազգային իրավունքի jus cogens նորմերը:	4	2	2
Թեմա 7. Տարածքը միջազգային հանրային իրավունքում:	4		4
Ընդամենը	32	16	16

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Միջազգային հանրային իրավունքը որպես իրավունքի համակարգ:

- Միջազգային իրավունքը որպես առանձին և հատուկ համակարգ:
- Միջազգային իրավունքի տարբերությունը ներպետական իրավունքից
- Միջազգային և ներպետական իրավունքի փոխգործակցելիությունն ու փոխլրացումը:

Թեմա 2. Միջազգային իրավունքի զարգացման փուլերը:

- Միջազգային իրավունքի ծնունդը և մոտեցումների տարբերությունը այդ հարցի վերաբերյալ:
- Վեստֆալյան հաշտություն և միջազգային հանրային իրավունքը 17-րդ դարի կեսից հետո:
- Միջազգային իրավունքի զարգացման փուլերը 19-րդ դարի վերջից մինչև մեր օրեր:
- Ժամանակակից միջազգային իրավունք

Թեմա 3. Իրավասուբյեկտությունը միջազգային իրավունքում: Միջազգային իրավունքի սուբյեկտները:

- Ի՞նչ է իրավասուբյեկտությունը միջազգային իրավունքում:
- Միջազգային իրավունքի հիմնարար կամ առաջնային սուբյեկտներ:
- Միջազգային իրավունքի երկրորդական կամ ածանցյալ սուբյեկտներ:

- Հատուկ կամ Sui generis կազմավորումները միջազգային իրավունքում:

Թեմա 4. Միջազգային իրավունքի աղբյուրները:

- Միջազգային իրավունքի աղբյուրներն ու դրանց դասակարգումը
- ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդված:
- ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրությունում չընդգրկված աղբյուրներ:

Թեմա 5. Միջազգային հանրային հիմնարար սկզբունքները

- Միջազգային իրավունքի սկզբունքի հասկացությունը
- Միջազգային իրավունքի սկզբունքներն ամրագրող միջազգային իրավունքի աղբյուրները:

Թեմա 6. Միջազգային իրավունքի jus cogens նորմերը:

- Jus cogens նորմերը միջազգային իրավունքում:
- Jus cogens նորմերի փոփոխությունը
- Erga omnes պարտավորությունները միջազգային իրավունքում:

Թեմա 7. Տարածքը միջազգային հանրային իրավունքում:

- Ցամաքային տարածքները միջազգային իրավունքում
- Օդային, ջրային տարածքների կարգավիճակը միջազգային իրավունքում
- Պետությունների սահմանները
- Սահմանազատում և սահմանագծում
- Ճանաչումը միջազգային իրավունքում:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

<u>Հիմնական գրականություն</u>

1. Քոչարյան Վ. , Միջազգային իրավունք, Երևան, 2002.
2 Бирюков П.Н. Международное право в 2 т.: учебник учебник для академического бакалавриата. М.: Юрайт, 2018.

Լրացուցիչ գրականություն

1. Antonio Cassese, International Law, Oxford University Press, 2005.
2. Вылегжанин А.Н., Колосов Ю.М. // Международное право в 2 Т.: учебник для академического бакалавриата. М.: Юрайт, 2015.
3. Международное право. Учебник./ И.И. Лукашук. издательство «Волтерс Клувер», 2008 г.
4. Международное право: Учебник /Вольфганг Граф Витутум. (и др.) / Пер. с нем. — М., Инфотроник Медиа, 2011.
5. Оганесян В.А. Принципы уголовного правосудия в международном праве. Эволюция и особенности имплементации. MOCKBA-NOTA BENE-2012.

ՍՏՈՒԳԱՐՔԻ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Միջազգային հանրային իրավունքի էությունը: Միջազգային իրավունքի համակարգը:
2. Միջազգային հանրային և միջազգային մասնավոր իրավունք: Վերջինների տարբերությունները:
3. Միջազգային իրավունքի նորմերը: Նորմաստեղծ գործունեությունը:
4. Միջազգային իրավունքի՝ որպես առանջին համակարգ և ներպետական իրավունքի նմանություններն ու տարբերությունները:
5. Միջազգային իրավունքի առաջնային կամ հիմնական աղբյուրներ:
6. Միջազգային իրավունքի երկրորդային կամ ածանցյալ աղբյուրներ:
7. Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները:
8. Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը:
9. Ազգերի և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը:
10. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը:
11. Այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը:
12. Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը:
13. Ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը:
14. Պետությունների համագործակցության սկզբունքը:
15. Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները հարգելու սկզբունքը:
16. Պետական սահմանների անխախտելիության սկզբունքը: Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը:
17. Միջազգային իրավունքի սուբյեկտների հասկացությունը և տեսակները: Իրավասուբյեկտությունը միջազգային իրավունքում:
18. Պետությունը՝ որպես միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտ:
19. Անկախության համար պայքարող ժողովուրդների և ազգերի միջազգային իրավասուբյեկտությունը:
20. Տարածքը միջազգային իրավունքում:
21. Պետական սահմանների սահմանման հասկացությունը, տեսակները և մեթոդները: Սահմանազատում և սահմանագծում:

22. Ճանաչում միջազգային իրավունքում, ճանաչման տեսակներն ու ձևերը, ճանաչման տեսություններ: